



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**



ԱՐՏԱՅԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

**ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՆՁԻ ԽԱՆՏՄԱՆ
ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՄԵՆԱՆԻՋՄՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՐԵՎԱՆ 2020



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**



**ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ
ԶԵԿՈՒՅՑ**

**ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԻ
ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՐԵՎԱՆ 2020

Բովանդակություն

| | |
|--|-----------|
| Ներածություն | 3 |
| Գլուխ 1 Ողջամիտ ժամկետը՝ որպես անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ. իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակությունը..... | 5 |
| Գլուխ 2 Գործերի քննության տևողությունը ՀՀ դատական պրակտիկայում. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում | 14 |
| Գլուխ 3 Ողջամիտ ժամկետի խախտման փաստի արձանագրման և իրավունքների վերականգնման ներպետական կառուցակարգերի բացակայությունը..... | 19 |
| <i>Ա) դատական ակտերի բողոքարկման ընթացակարգերը.....</i> | <i>20</i> |
| <i>Բ) Ընթացիկ դատական գործերով մեկ այլ դատարանի կողմից ողջամիտ ժամկետի հարցի քննարկման և ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգը.....</i> | <i>27</i> |
| <i>Գ) Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգը.....</i> | <i>35</i> |
| <i>Դ) Կանխարգելիչ միջոցները.....</i> | <i>37</i> |
| Գլուխ 4 Քննարկման առարկա դրույթների դիտարկումը միջազգային փորձի տեսանկյունից..... | 43 |

Ներածություն

Արդար դատաքննության իրավունքն ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, ամրագրված է իբրև անձի հիմնական իրավունք: Դրա կարևոր բաղադրիչներից է յուրաքանչյուր անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը:

Սույն զեկույցն անդրադառնում է նշված տարրերից մեկին՝ ողջամիտ ժամկետին, ինչպես նաև դրա կարևորությանը դատական քննության ընթացքում: Գործի քննության նշված երաշխիքի նպատակը դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն է քննության չափից ավելի ձգձգումներից, որոնք կարող են խաթարել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրա նկատմամբ վստահությունը: Նշվածով հանդերձ, քննարկվող երաշխիքի նշանակությունն այն է, որ *պետք է ապահովվի ողջամիտ ժամկետում համապատասխան դատական ակտի կայացումը՝ դրանով իսկ վերջ դնելով այն անորոշ վիճակին, որում գտնվում է անձը՝ կապված քաղաքացիաիրավական բնույթի իր կարգավիճակի կամ իր նկատմամբ առաջադրված մեղադրանքի հետ, ինչը կարևոր է ինչպես շահագրգիռ անձի համար, այնպես էլ «իրավական որոշակիության» ապահովման տեսանկյունից¹:*

¹ Հասանելի է հետևյալ հղմամբ.

<https://rm.coe.int/168007ff49>, էջ 25:

Այս արտահերթ զեկույցը, մասնավորապես, քննարկում է ՀՀ օրենսդրությամբ դատարաններում գործերը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրական պահանջի պատշաճ ապահովման ճկուն մեխանիզմի բացակայության հարցը: Գործող կարգավորումները նախատեսում են միայն դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի առնվող հանգամանքները: Նշված հոդվածով ամրագրված չէ ողջամիտ ժամկետում գործի դատական քննության խախտված իրավունքի վերականգնման օրենսդրական հնարավորությունը: Ստացվում է, որ դատարանում գործի քննությունը կարող է տարիներով ձգձգվել և անհետևանք մնալ դատարանի համար: Միջազգային իրավական համակարգերում մեծ տարածում ունեն ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման կանխարգելիչ միջոցները, որոնք, սակայն, մեր ներպետական կարգավորումներում բացակայում են:

Առկա օրենսդրական բացը չի ապահովում ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքի ամբողջական իրացման հնարավորությունը: Սա հիմք է հանդիսացել Մարդու իրավունքների պաշտպանի՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի ուժով դիմել Սահմանադրական դատարան՝ վիճարկելու «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի վերաբերելի կարգավորումների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով իրավական ակտով չի սահմանվել ողջամիտ ժամկետում գործի քննության կամ եզրափակիչ դատական ակտի կատարման իրավունքը խախտելու դեպքում շահագրգիռ անձանց կողմից խախտված իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցներ:

Գլուխ 1

Ողջամիտ ժամկետը՝ որպես անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ. իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակությունը

Սահմանադրության 63-րդ՝ «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ հողվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և **ողջամիտ ժամկետում** քննության իրավունք:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, արդար դատաքննության իրավունքի տարր լինելով, նախ և առաջ նպատակ ունի սահմանելու այնպիսի երաշխիք, որով անձը կկարողանա իմանալ իրեն հուզող հարցի հանգուցալուծման հնարավոր ժամկետները: Այն նպատակ ունի շահագրգիռ անձին պաշտպանելու երկարատև անորոշ վիճակից:

Ողջամիտ ժամկետի սահմանադրաիրավական բովանդակությունը որոշակիորեն բացահայտվել է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «Գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման մասին» 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 98 որոշմամբ, որի համաձայն՝ *գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի կարող արդարացվել անգամ, եթե համապատասխան դատավարական որոշումներն ընդունվել են անձի օգտին:*

Սահմանադրական դատարանն իր 2013 թվականի փետրվարի 5-ի թիվ ՍԴՈ-1074 որոշմամբ տվել է իրավական դիրքորոշում առ այն, որ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով

պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: **Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությունն անհարկի, կամայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան:**

Վճռաբեկ դատարանն իր հերթին արձանագրել է, որ **դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է²:**

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Գործի քննության «ողջամիտ ժամկետ» հասկացության բովանդակության բացահայտմանն է անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ դատարանն իրազեկ է այն դժվարությունների մասին, որոնք երբեմն դանդաղեցնում են (...) վեճերի քննությունը (...): Բայց և այնպես, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԳԴ1/0012/13/09 և ԼԴ/0082/13/09 որոշումները:

ին կետին համապատասխան՝ գործերը պետք է քննվեն ողջամիտ ժամկետում. Կոնվենցիան նշանակություն է տալիս այն հանգամանքին, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ընդհատումներով, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը³:

Դատարանն ընդգծել է, որ պետությունները պարտավոր են ստեղծել այնպիսի իրավական համակարգ, որ դատարանները համապատասխանեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, ներառյալ՝ ողջամիտ ժամկետում դատաքննությունը⁴:

Ողջամիտ ժամկետի պահպանման տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունի դրա բովանդակության բացահայտումը՝ գործի քննության դատավարական փուլերի առումով: Այսպես, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է, որ քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները որոշվեն ողջամիտ ժամկետում՝ չբացառելով գործն ըստ էության լուծող վճռին հաջորդող փուլերը⁵:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածով թեև չի սահմանվում բողոքարկման իրավունքը, սակայն Եվրոպական դատարանը նշել է, որ եթե պետությունները ներպետական օրենսդրությամբ սահմանում են բողոքարկման իրավական հնարավորություն, ապա Կոնվենցիայի 6-րդ

³ Տե՛ս Հ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (H. v. France) գործով 1989 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 10073/82, կետ 58:

⁴ Տե՛ս Զիմերմանը և Սթեյներն ընդդեմ Շվեյցարիայի (Zimmermann and Steiner v. Switzerland) գործով 1983 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 8737/79, կետ 29:

⁵ Տե՛ս Ռոբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Robins v. United Kingdom) գործով 1997 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 22410/93, կետ 28:

հողվածի երաշխիքները նույնությամբ տարածվում են այդ գործընթացների վրա ևս⁶:

Ինչ վերաբերում է քննարկվող ժամկետի հաշվարկի սկզբնական պահին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է բուն դատական գործընթացից ավելի վաղ փուլից սկսելու պահանջ: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կարող է նաև կիրառվել այն վարույթների նկատմամբ, որոնք թեև իրենց բնույթով ամբողջությամբ դատական չեն, սակայն սերտորեն կապված են դատական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության հետ, ինչպիսին, օրինակ, գույքի բաժանման վերաբերյալ գործով վարույթն է, որն իրականացվել է ոչ շարունակական հիմքերով նոտարական երկու մարմիններում, սակայն նշանակվել և հաստատվել է դատարանի կողմից: Եվրոպական դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է նման գործերի նկատմամբ⁷:

Այդպիսով, միջազգային իրավական մոտեցումների համաձայն՝ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջը կիրառելի է ոչ միայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների վարույթում քննվող գործերի նկատմամբ, այլև պետք է ներառի նաև այդ վարույթների հետ կապված և դրանց նախորդող գործընթացները, ինչպես նաև դատական ակտերի վերանայման փուլերը:

⁶ Տե՛ս Դելքուրն ընդդեմ Բելգիայի (Delcourt v. Belgium) 1970 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 2689/65, կետ 25:

⁷ Տե՛ս Սիեգելն ընդդեմ Ֆրանսիայի (Siegel v. France) գործով 2001 թվականի փետրվարի 28-ի վճիռը, գանգատ թիվ 36350/97, կետ 69:

Ներպետական մակարդակում՝ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «Գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման մասին» 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 98 որոշման համաձայն՝ քաղաքացիական գործերով գործի **քննության ժամկետի սկիզբ պետք է համարել այն պահը, երբ առաջին անգամ դատարանը հայցը կամ դիմումն ընդունել է վարույթ, իսկ քրեական գործերով՝ այն պահը, երբ առաջադրվում է մեղադրանքը, որը կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան, այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր դեմ քրեական գործ է հարուցվել կամ նախնական քննություն սկսելու պահից:**

Օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս, ի թիվս այլնի, հաշվի է առնվում **գործի քննության ընդհանուր տևողությունը:** Նշվածից հետևում է, որ գործի քննության ընդհանուր տևողության մեջ հաշվարկվում է վերաքննիչ և վճռաբեկ դատական ատյաններում բողոքների քննության ժամանակահատվածը ևս:

Արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող ողջամիտ ժամկետի երաշխավորումն առաջին հերթին կանխորոշվում է դատարանակազմական և դատավարական լիարժեք կառուցակարգերով և դրանց պատշաճ գործադրմամբ: Հետևաբար, դատավարական ողջամիտ ժամկետների պահպանումն իր հերթին փոխապայմանավորված է մի շարք ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ գործոններով, ինչպիսիք են՝

- դատարանների ծանրաբեռնվածության համաչափությունը,
- գործի քննության անխոչընդոտ ընթացքն ապահովելու դատավարական հստակ կառուցակարգերը,

- դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ վարքագիծը և այն ապահովող օրենսդրական լծակները,

- դատավարական ժամկետների սահմանումը,

- ապացույցներ հետազոտելու անհրաժեշտությունը և այլն:

Ողջամիտ ժամկետը վերացական հասկացություն չէ. այն մեծապես կախված է կոնկրետ գործի առանձնահատկություններից, և տևողության միևնույն թվային ցուցանիշը կարող է մի դեպքում համարվել ողջամիտ, մյուս դեպքում ոչ: Ուստի, հարկ է անդրադառնալ նաև ողջամիտ ժամկետի գնահատման չափորոշիչներին ու ներպետական մակարդակում դրանց կարգավորվածության աստիճանին:

Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝

1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը,

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

Միևնույն ժամանակ, մինչ օրս Բարձրագույն դատական խորհուրդը չի ընդունել գործի քննության միջին ուղենիշային տևողությունը սահմանող համապատասխան ակտ:

Նշված չափանիշների իրավական բովանդակությունը բացահայտվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Մասնավորապես, անդրադառնալով **գործի բարդությանը**⁸ Դատարանը նշել է, որ այն կարող է կապված լինել ինչպես փաստերի, այնպես էլ իրավական տեսակետների հետ⁸, օրինակ, գործում մի քանի կողմ ներգրավելու⁹, տարբեր ապացույցներ ձեռք բերելու¹⁰, փորձագետի եզրակացությունն ստանալու հետ¹¹ և այլն:

Վարույթի մասնակցի վարքագծին անդրադառնալով՝ Եվրոպական դատարանը նշել է, որ վարույթի մասնակցի վարքագիծը համարվում է օբյեկտիվ փաստ, որը չի կարող վերագրվել պատասխանող պետությանը, և որը պետք է հաշվի առնել՝ որոշելու համար, թե արդյոք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ողջամիտ ժամկետը գերազանցվել է, թե ոչ¹²: ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1464 որոշմամբ արտահայտած դիրքորոշման համաձայն՝ վարույթի մասնակցի վարքագիծն ինքնին չի կարող օգտագործվել որպես միջոց անգործության ժամանակահատվածն արդարացնելու համար:

⁸ Տե՛ս Քաթ Կլիշչե դե լա Գրանգեն ընդդեմ Իտալիայի (Katte Klitsche de la Grange v. Italy) գործով 1994 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 12539/65, կետ 55:

⁹ Տե՛ս Հ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (H. v. United Kingdom) գործով 1987 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 9580/81, կետ 72:

¹⁰ Տե՛ս Հյումենն ընդդեմ Լեհաստանի (Humen v. Poland) գործով 1999 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 26614/95, կետ 63:

¹¹ Տե՛ս Պանդոլֆելլին և Պալումբոն ընդդեմ Իտալիայի (Pandolfelli and Palumbo v. Italy) գործով 1992 թվականի փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 13218/87, կետ 17:

¹² Տե՛ս Պոյսսն ընդդեմ Ավստրիայի (Poiss v. Austria) գործով 1987 թվականի ապրիլի 23-ի վճիռը, գանգատ թիվ 9816/82, կետ 57:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով դիմումատուներից չի պահանջվում ակտիվորեն համագործակցել դատական մարմինների հետ, մյուս կողմից՝ նրանց չի կարելի մեղադրել ներպետական օրենսդրությամբ նրանց համար հասանելի իրավական պաշպանության միջոցներից լիովին օգտվելու համար¹³: Վարույթի մասնակցից պահանջվում է միայն ողջամտություն ցուցաբերել առնչվող դատավարական քայլերի կատարման հարցում, ձեռնպահ մնալ վարույթը ձգձգելու հնարքների գործադրումներից և օգտվել ներպետական օրենսդրությամբ տրամադրվող շրջանակներից վարույթը կրճատելու համար¹⁴:

Վարույթի մասնակցի համար **գործի տևական քննության հետևանքների վերաբերյալ** Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն այն է, որ որոշ տեսակի գործեր պետք է ավելի արագ քննվեն՝ նկատի ունենալով վեճի առարկայի բնույթը և այդ տեսակ գործերի տևական քննության հետևանքները: Մասնավորապես, ավելի արագ պետք է լուծվեն երեխայի խնամակալության¹⁵, կենսաթոշակի¹⁶,

¹³ Տե՛ս Երկներն ու Հոֆաուերն ընդդեմ Ավստրիայի (Erkner and Hofauer v. Austria) գործով 1987 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատ թիվ 9616/81, կետ 68:

¹⁴ Տե՛ս Յունիոն Ալիմենտարիա Սանդերս ՍԱ-ն ընդդեմ Իսպանիայի (Union Alimentaria Sanders SA v. Spain) գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 11681/85, կետ 35:

¹⁵ Տե՛ս Հոկանենն ընդդեմ Ֆինլանդիայի (Hokkanen v. Finland) գործով 1994 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 19823/92, կետ 72:

¹⁶ Տե՛ս Բորգեսենն ընդդեմ Իտալիայի (Borgese v. Italy) գործով 1992 թվականի փետրվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 12870/87, կետ 18:

աշխատանքային¹⁷, կենսական նշանակություն ունեցող դրամական միջոցների վճարման¹⁸ և այլ պահանջների վերաբերյալ վեճերը:

Ողջամիտ ժամկետում գործի քննության հաջորդ չափանիշը հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով **դատարանի կատարած գործողություններն ու դրանց արդյունավետությունն է:**

¹⁷ Տե՛ս Կորմաչևան ընդդեմ Ռուսաստանի (Kormacheva v. Russia) գործով 2004 թվականի հունիսի 14-ի վճիռը, գանգատ թիվ 53084/99, կետ 56:

¹⁸ Տե՛ս Դաուսթալին ընդդեմ Ֆրանսիայի (Doustaly v. France) գործով 1998 թվականի ապրիլի 23-ի վճիռը, գանգատ թիվ 26256/95, կետ 48:

Գլուխ 2

Գործերի քննության տևողությունը ՀՀ դատական պրակտիկայում. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում

Գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման խնդիրը դիտարկվել է ոչ միայն օրենսդրական հարթությունում, այլև պրակտիկ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքների հաշվառմամբ, ուսումնասիրվել են նաև դատական պրակտիկայի ժամկետների վերաբերյալ առկա վիճակագրական տվյալները:

Կոնկրետ դատական վարույթին և դատավորի լիազորությունների իրականացմանը չմիջամտելու օրենսդրական պահանջից ելնելով՝ առանձին գործերով ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը Պաշտպանի կողմից թեև քննության առարկա չեն դարձել, այնուհանդերձ, բողոքներում բարձրացված խնդիրներն ազդակ են հանդիսացել ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման դեպքերի և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ ՀՀ դատական համակարգում տիրող իրավիճակի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար:

Պաշտպանին բազմաթիվ քաղաքացիներ են դիմել՝ բարձրացնելով իրենց գործի դատական քննությունը ողջամիտ ժամկետներում չիրականացնելու և դրա համար համապատասխան պատասխանատվություն նախատեսված չլինելու հարցը: Մասնավորապես, բողոքների հիմնական մասը վերաբերում է նրան, որ դատարաններում գտնվող գործերի քննությունը տարիներ է տևում, որպիսի պայմաններում՝ չնայած նրան, որ խախտվում է դատարանի

կողմից անձանց գործի ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական իրավունքը, այնուամենայնիվ, նրանց խախտված այդ իրավունքի վերականգնման արդյունավետ կառուցակարգեր առկա չեն: Օրինակ, բողոքներից մեկով ամբաստանյալը տեղեկացրել է, որ դատական նիստերը շարունակ անհիմն հետաձգվում են, ընդհանուր առմամբ շուրջ 50 դատական նիստ չի կայացվել: Մեկ այլ դեպքում դատարանում գործը քննվում է 8 տարուց ավելի, և տվյալ գործով վերջնական դատական ակտ դեռևս չի կայացվել: Մեկ այլ բողոքի համաձայն՝ դատական նիստերը նշանակվում են 2-3 կամ 3-6 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, իսկ նշանակված նիստերն էլ, ըստ բողոք ներկայացրած անձանց՝ անհիմն հետաձգվում են (եղել է դեպք, երբ միմյանց հաջորդող 5 նիստեր հետաձգվել են) և այլն:

Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի տարեկան հաղորդման¹⁹ համաձայն՝ միայն Երևան քաղաքում առկա է 155 քրեական և 1628 քաղաքացիական գործ, որոնց քննությունը երկու և ավելի տարիներ ձգձգվում է (կան գործեր, որոնց քննությունը չի ավարտվում 10 և ավելի տարիներ): Միայն 7 դատավորների մոտ նման գործերի ընդհանուր թիվը հասնում է 1123-ի: Նույն հաղորդման համաձայն՝ օրինակ, վարչական դատարանի Վանաձորի նստավայրում դատավորի մոտ առկա է 2 և ավելի տարիներ քննվող 169 գործ:

Ուշագրավ է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի վավերացումից

¹⁹ Հասանելի է

http://court.am/arm/left/annual_report/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4.pdf:

հետո Հայաստանի Հանրապետության դեմ կայացվել է 103 վճիռ, որից 40-ը (38.8 տոկոսը) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման հիմքով²⁰:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Այսինքն՝ միայն իրավունքի ճանաչումը և ամրագրումը բավարար չէ և իրավունքի իրացումն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի նախատեսվեն գործուն մեխանիզմներ:

Օրենսգրքի խնդրո առարկա կարգավորումների պարագայում, ըստ էության, *ողջամիտ ժամկետում* գործի քննության իրավունքն այնքանով, որքանով այդ իրավունքի խախտման կանխարգելման կամ խախտված իրավունքի վերականգնման պատշաճ կառուցակարգեր չեն գործում, հոչակագրային է:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի արդյունավետ իրականացումը կախված է կազմակերպական կառուցակարգերից, ընթացակարգերից և իրավունքի խախտման համար համապատասխան պատասխանատվության միջոցներից, որոնց բացակայությունը չի բխում ո՛չ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ և 81-րդ հոդվածների պահանջներից, ո՛չ միջազգային իրավական չափանիշներից:

Սահմանադրական դատարանը, 2010 թվականի փետրվարի 5-ի թիվ ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր

²⁰ Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի տարեկան հաղորդումը, <http://new.court.am/storage/uploads/files/service-page/T63G7RkWdVgDqUNjPVM5ddAQiTGmCyQJhrhWaXm.pdf>, էջ 86-87:

մարմնի իրավասությունների հարաբերակցությանը, նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Սահմանադրական դատարանն իր 2014 թվականի ապրիլի 8-ի թիվ ՍԴՈ-1143 որոշմամբ նշել է, որ օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը:

Իր 2010 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-914 որոշմամբ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ *առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:*

Սույն դիմումում բարձրացված խնդրի նկարագրությունից և բերված հիմնավորումներից միանշանակ է, որ գործ ունենք ոչ թե Օրենսդրի միջամտությունը պահանջող շտկման կամ նորմատիվ պատվիրանի բացակայության հետ, այլ առկա օրենսդրական բացը չի ապահովում ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքի ամբողջական իրացման հնարավորությունը: Դրանով միաժամանակ չի ապահովվում Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ըստ որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքի լիարժեքությունն ապահովող տարրի՝ ողջամիտ ժամկետի պաշտպանության գործուն կառուցակարգերի բացակայության հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերության ամբողջական և բնականոն իրագործումը, որպիսի պայմաններում հիմնավոր ենք համարում խնդիրը դիտարկել դրա սահմանադրականության տեսանկյունից:

Գլուխ 3

Ողջամիտ ժամկետի խախտման փաստի արձանագրման և իրավունքների վերականգնման ներպետական կառուցակարգերի բացակայությունը

Միջազգային իրավական մոտեցումները փաստում են, որ ողջամիտ ժամկետը՝ որպես արդար դատաքննության իրավունքի անօտարելի նախապայման, ենթադրում է նաև ներպետական մակարդակում դրա բովանդակության որոշակիացման, իսկ խախտման դեպքում՝ իրավունքների վերականգնման կառուցակարգերի առկայություն: Ուստի, խնդրո առարկա օրենսդրական կարգավորումները, իսկ որոշ դեպքերում՝ դրանց բացակայությունը (օրենսդրական բաց) դիտարկվել են երկու տեսանկյունից էլ՝ թե՛ ողջամիտ ժամկետների պահպանման ու դրանց գնահատման չափորոշիչների, թե՛ խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ միջոցների առկայության առումով:

Ողջամիտ ժամկետների խախտման դեպքում անձի իրավունքների վերականգնման ներպետական ընթացակարգերի արդյունավետությունը սույն դիմումի շրջանակներում ուսումնասիրության առարկա է դարձել՝ անդրադարձ կատարելով ինչպես դատական ակտերի վերանայման գործող կառուցակարգերին, այնպես էլ կարգապահական վարույթին, ընթացիկ դատական գործերով մեկ այլ դատարանի կողմից ողջամիտ ժամկետի հարցի քննարկմանը: Ընդ որում, վերը նշված ընթացակարգերը դիտարկվել են ողջամիտ ժամկետների խախտման փաստի արձանագրման և անձի խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից դրանց արդյունավետությունը կամ ավելի ճիշտ դրանց ոչ արդյունավետ լինելը մատնանշելու նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված միջոցը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրությամբ: Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ *միջոցն արդյունավետ է, եթե այն կանխում է ենթադրյալ խախտումը կամ դրա շարունակականությունը կամ ապահովում է արդեն տեղի ունեցած խախտման համար համարժեք փոխհատուցում*²¹:

Իրավունքի պաշտպանության միջոցի արդյունավետության այս չափանիշի կիրառմամբ՝ ստորև քննարկման առարկա են դարձել ներպետական կառուցակարգերը՝ գործի քննության ողջամիտ ժամկետի համատեքստում:

Ա) դատական ակտերի բողոքարկման ընթացակարգերը.

Գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման իրավական և փաստական հետևանքների վերացման կառուցակարգերի խնդիրը որոշակիորեն ամրագրվել է Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքում: Սահմանադրական դատարանը, մասնավորապես քննարկման առարկա դարձնելով վարչական դատավարությունում գործի վերսկսման ինստիտուտի իրավաչափությունը

²¹ Տե՛ս Վլադը և այլք ընդդեմ Ռումինիայի (Vlad and others v. Romania) գործով 2013 թվականի նոյեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 40756/06, 41508/07 և 50806/07, կետ 111: Ուազերմանն ընդդեմ Ռուսաստանի (Wasserman v. Russia (No 2)) գործով 2008 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատ թիվ 21071/50, կետ 45: Կուդլան ընդդեմ Լեհաստանի (Kudła v. Poland) գործով 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 30210/96, կետ 158: Դորանն ընդդեմ Իռլանդիայի (Dorann v. Ireland) գործով 2003 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը, գանգատ թիվ 50389/99, կետ 59:

ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից, արձանագրել է, որ չի կարող արդարացված համարել բոլոր այն դեպքերը, երբ, ինչպես վկայում են գործի նյութերը, 5-7 անգամ դատարանն անցկացնում է նախնական դատական նիստեր և ապա դատաքննության արդյունքում կրկին որոշում է կայացնում վերսկսել (ընդ որում՝ ոչ մեկ անգամ) գործի դատաքննությունը: Դատարանի գնահատմամբ՝ **սա վկայում է արդարադատության որակի ու դատական վերահսկողական համակարգերի հնարավոր բացերի մասին:** *Նման պրակտիկայի առկայությունը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա ինստիտուտի առկայությամբ, այլ վերջինիս ոչ համարժեք կիրառման, դատաքննության ոչ պարզաձև իրականացման հանգամանքներով, ինչը բողոքարկման ինստիտուտի շրջանակներում պետք է անհրաժեշտ վերաբերմունքի արժանանա՝ նման դատական ակտերի գնահատման ու նախադեպային պրակտիկայի ձևավորման իրավասությամբ օժտված դատական ասպիտանների կողմից:*

Ավելին, Դատարանը սահմանադրաիրավական առումով իրավաչափ չի համարել դատարանների գերծանրաբեռնվածության կամ օրենքով ամրագրված հիմքերից չբխող պատճառով գործի քննության վերսկսումը²²:

Հետաքրքրական է, որ Սահմանադրական դատարանի վերը նշված իրավական գնահատականը փաստում է, որ ողջամիտ ժամկետների գործնական չպահպանումը **«դատական վերահսկողական համակարգերի հնարավոր բացերի»** արդյունք է, որպիսի խնդիրը պետք է **«անհրաժեշտ վերաբերմունքի արժանանա բողոքարկման ինստիտուտի շրջանակներում»:**

²² Տե՛ս Սահմանադրական դատարանի 2013 թվականի փետրվարի 5-ի ՍԴՌ-1074 որոշումը:

Հենց այս տրամաբանությամբ էլ ուսումնասիրության առարկա են դարձել դատական ակտերի բողոքարկման գործող դատավարական կարգավորումների արդյունավետությունը՝ հենց ողջամիտ ժամկետների խախտման արդյունքում անձի իրավունքների վերականգնման տեսանկյունից:

Ինդիրն անհրաժեշտ է դիտարկել հետևյալ իրավական հարցադրումների շրջանակներում՝

- արդյոք ընթացիկ դատական գործով գործը քննող դատարանը կարող է հանդես գալ իբրև արդյունավետ պաշտպանության միջոց, երբ արդեն իսկ խախտվել են ողջամիտ ժամկետները: Ի՞նչ իրավական ընթացակարգերով պետք է քննարկվի այդ հարցը գործը քննող դատարանի կողմից, և որո՞նք են դրա իրավական հետևանքները,

- արդյոք ընթացիկ դատական գործերով ողջամիտ ժամկետների չպահպանման հարցը կարող է մեկ այլ դատարանի (դատական ատյանի) կամ Բարձրագույն դատական խորհրդի քննարկման առարկա դառնալ,

- արդյոք դատական ակտի կայացումից հետո ողջամիտ ժամկետի խախտման հարցը՝ որպես դատավարական իրավունքի խախտում, կարող է բողոքարկման հիմք հանդիսանալ, ինչպե՞ս և ի՞նչ ծավալով այն կարող է դատական վերանայման առարկա լինել,

- արդյոք դատական ակտերի վերանայման կառուցակարգերի արդյունքում Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների դատական ակտերը կարող են համարվել ողջամիտ ժամկետի խախտման փաստին «համարժեք արձագանք»,

- բոլոր այն դեպքերում, երբ ողջամիտ ժամկետի չպահպանման հարցը չի ազդել գործի ելքի վրա, և քննարկման առարկա է ոչ թե

դատական ակտն ինքնին՝ որպես գործն ըստ էության լուծող, այլ միայն արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը՝ ողջամիտ ժամկետը, բողոքարկման ո՞ր ընթացակարգի տրամաբանության մեջ է այն ներառվում:

Այսպես, գործող դատավարական կարգավորումների դիտարկումը թույլ է տալիս վեր հանելու անձի արդար դատաքննության իրավունքի կամ դրա առանձին բաղադրիչների խախտումների դատական վերանայման կառուցակարգերի հետևյալ բնութագրիչ առանձնահատկությունները քրեական, քաղաքացիական և վարչական դատավարություններում՝

✓ իբրև վերաքննության կարգով բողոքարկման հիմք՝ նախատեսված է դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը: Ընդ որում, Քրեական դատավարության օրենսգրքի 380.1-րդ և Վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածների ուժով՝ իբրև բողոքարկման հիմք հանդես է գալիս **դատական այն սխալը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:**

«Քրեական դատավարության օրենսգրքի 380.1-րդ և 406-րդ հոդվածների համաձայն՝ համապատասխանաբար վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝

1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

Այնուհետև, նույն օրենսգրքի՝ բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերն ամրագրող 395-րդ հոդվածի համաձայն՝ *բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝*

1) գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին.

2) ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը.

3) առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում.

4) դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին:

2. Բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե հաստատվել է նոր երևան եկած կամ նոր հանգամանքը, որն ազդել է դատական ակտի օրինականության կամ հիմնավորվածության վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ նույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով **խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:**

Վարչական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված նույն օրենսգրքի 151-րդ և 152-րդ հոդվածներով սահմանված դեպքերում:

Նույն օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ **դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ**

կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասն էլ, իր հերթին, սահմանում է, որ **դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:** Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

✓ դատական ակտերի վերանայման գործող կառուցակարգերի տրամաբանության հիմքում ընկած է դատական սխալի վերացումը՝ այն դիտարկելով գործի ելքի վրա ունեցած ազդեցություն տեսանկյունից:

Մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ և 419-րդ, Վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ և 169-րդ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ և 405-րդ՝ համապատասխանաբար Վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորություններն ամրագրող դրույթներից բխում է, որ *վերաքննության և վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայման արդյունքը ևս պայմանավորվում է վիճարկվող ակտի բովանդակության՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն փոփոխման, բեկանման և նոր քննության հետ, ինչը ենթադրում է ստորադաս դատարանի թույլ տրված դատական սխալին անդրադարձ այնքանով, որքանով այն արտացոլվել է դատական ակտի բովանդակության մեջ:* **Վերանայման գործող ընթացակարգերն էլ ուղղված են հենց գործի ճիշտ ելքը կանխորոշելուն: Ողջամիտ**

Ժամկետի պահանջի չպահպանման հարցի քննարկումը, հետևաբար, այդ վերանայման ընթացակարգերի տրամաբանությունից դուրս է: Այսինքն, երբ գործն ըստ էության ճիշտ է լուծվել, սակայն դա ողջամիտ ժամկետում չի իրականացվել, ապա իր այդ իրավունքի խախտման հիմքով դատական ակտը բողոքարկելու հնարավորություն դատավարության մասնակիցը չունի:

Մյուս կողմից, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ապա ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման հիմքով դատական ակտը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելը չի կարող իրավունքի խախտումը վերացնելու արդյունավետ միջոց համարվել: Ընդհակառակը, դա է՛լ ավելի կձգձգի գործի քննությունը: Հետևաբար, այդ տեսանկյունից ևս *դատական ակտի վերանայումն արդյունավետ մեխանիզմ չէ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման վերացման համար:* Նմանատիպ դիրքորոշում է հայտնել նաև Եվրոպական դատարանը՝ նշելով, որ *ավելի բարձր արյաններին դիմելը չի կարող համարվել որպես արդյունավետ միջոց գործի քննության փնտրությունը վիճարկելու համար*²³:

Հետևաբար, դատական ակտերի բողոքարկման ընթացակարգերի, վերանայման արդյունքում վերադաս դատական ատյանների կայացրած դատական ակտերի շրջանակից հետևում է, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումը վերացնելու միջոցները չեն կարող ապահովվել վերանայման կառուցակարգերի շրջանակներում:

²³ Տե՛ս Հարթմանն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Hartman v. Czech Republic) գործով 2003 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 53341/99, կետ 82:

Բ) Ընթացիկ դատական գործերով մեկ այլ դատարանի կողմից ողջամիտ ժամկետի հարցի քննարկման և ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգը.

Ներպետական իրավակարգավորումների արդյունավետությունը հարկ է դիտարկել նաև ընթացիկ վարույթներով այլ դատարանի կողմից ողջամիտ ժամկետի հարցի քննարկման հնարավորության տեսանկյունից: Սրա հետ կապված, հետաքրքրական է դատական պրակտիկայից հետևյալ օրինակի վկայակոչումը: Մասնավորապես, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններից մեկի կայացրած դատական ակտով ներպետական դատարանն արձանագրել է, որ «ինչպես արդար դատաքննության, այնպես էլ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների անքակտելի մասն է կազմում իրավունքը խախտված անձի հայցով հարուցված դատական վարույթի լուծումը ողջամիտ ժամկետում, քանի որ **ուշացած արդարադատությունը, երբեմն, մերժված արդարադատություն է:**

(...) արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները ներառում են անձի հայցի հիման վրա հարուցված դատական վարույթի քննությունը և լուծումը ողջամիտ ժամկետում, քանի որ գործի քննության ժամկետի երկարացումները կարող են հանգեցնել ինչպես նյութական և ոչ նյութական վնասների, այնպես էլ անձի մոտ Կրկնակ դատարանի նկատմամբ իրավական «հետաքրքրվածության» կորստին, ինչն իր հերթին կխաթարի դատական պաշտպանության իրավունքի բուն էությունն այն առումով, որ այդ իրավունքի իրականացումը փրամաբանորեն պետք է հանգեցնի անձի խախտված իրավունքների իրական /ռեալ/ վերականգնմանը:»:

Արդյունքում, դատարանը հաստատել է հայցվորի արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հիմնարար իրավունքների խախտման փաստը, ինչի հիման վրա դատարանը որոշել է Հայաստանի Հանրապետությունից հոգուտ հայցվորի բռնագանձել որոշակի գումար՝ որպես հիմնարար իրավունքների խախտմամբ պատճառված **ոչ նյութական վնասի հատուցում**²⁴:

Հետաքրքրական է, որ վկայակոչված գործով դատարանն անձի դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հիմնարար իրավունքների խախտման փաստը գնահատելիս առաջնորդվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումներով՝ ըստ էության անմիջականորեն կիրառելով ողջամիտ ժամկետի խախտման փաստը գնահատելու համար եվրոպական դատարանի զարգացրած իրավական չափանիշները:

Մեջբերված գործով դատարանի կողմից ողջամիտ ժամկետի հարցի քննարկումը թերևս ուղղված էր հենց անձի՝ դատարանի մատչելիության և իրավունքների վերականգնման արդյունավետ պաշտպանության միջոցի ապահովման միջազգային և սահմանադրաիրավական պահանջների կենսագործմանը: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ առանձին գործերով ողջամիտ ժամկետների խախտման փաստի արձանագրման և վնասի փոխհատուցման վերաբերյալ դատական պրակտիկայի նմանօրինակ դեպքերը համակարգային առումով չեն լուծում *իրավունքի վերականգնման կառուցակարգերի բացակայության հարցը*:

²⁴ Տե՛ս քաղաքացիական գործ թիվ ԵԴ/4961/02/18: Հասանելի է http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203848846:

Եվրոպական խորհրդի Արդարադատության արդյունավետության Եվրոպական հանձնաժողովը (CEPEJ) նշել է, որ *այն միջոցները, որոնք սահմանափակվում են միայն փոխհատուցմամբ, չափազանց թույլ են և բավարար չափով չեն շահագրգռում Պետություններին՝ փոփոխելու իրենց գործող ընթացակարգերը և ապահովելու փոխհատուցումը միայն խախտման փաստն ապացուցված լինելու դեպքում*: Պետությունները պետք է փորձեն վարույթների ձգձգման խնդրի որևէ լուծում գտնել²⁵:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի դիրքորոշման համաձայն՝ դատական վարույթի բոլոր փուլերը պետք է տեղի ունենան առանց անհարկի ձգձգումների: Դատավարության անհարկի ձգձգումներից հետո փոխհատուցում ստանալու զուտ հնարավորությունն արդյունավետ միջոց չէ Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրով սահմանված նպատակների իմաստով²⁶:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն իր բնույթով շարունակական է նույնքան, որքան այդ իրավունքի խախտումը, այն զարգանում է դատավարության զարգացմանը զուգահեռ: Անհարկի ձգձգումներ կարող են առաջանալ ցանկացած պահի մինչև դատավարության ավարտը, հետևաբար հնարավոր են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նոր խախտումներ, քանի դեռ դատավարությունը չի ավարտվել: Արդեն տեղի ունեցած անհարկի ձգձգումների համար դրամական

²⁵ Տե՛ս Սկորդինոն ընդդեմ Իտալիայի (Scordino v. Italy) գործով 2006 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 36813/97, կետ 74:

²⁶ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD\(2007\)044-e&fbclid=IwAR0ff-Fgfx4u24Ar_eyJxZdaKzle6gmmUqjmLIVVdilcU70XtZMIHOyKK8CU](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0ff-Fgfx4u24Ar_eyJxZdaKzle6gmmUqjmLIVVdilcU70XtZMIHOyKK8CU), էջ 27, կետ 140:

փոխհատուցում տրամադրելը չի բացառում, որ այլ անտեղի ձգձգումներ տեղի չեն ունենալու²⁷:

Բանն այն է, որ իրավունքի խախտման փաստի արձանագրումն ու փոխհատուցման հարցի լուծումն ինքնին չի կանխում իրավունքի խախտման շարունակականությունն այն առումով, որ հիմնական գործով ելքի հանգուցալուծման վրա որևէ ազդեցություն ունենալ չի կարող: Բացի այդ, ողջամիտ ժամկետի գնահատման հարցն ավելի է բարդանում, երբ խոսքը, օրինակ, վերաբերում է ոչ թե քաղաքացիական, այլ քրեական գործով մինչդատական և դատական վարույթների տևականությանը. այստեղ առաջ են գալիս նաև դատական ենթակայության և վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ դատարանի կողմից ողջամիտ ժամկետի գնահատման բավարար գործիքակազմի հարցեր:

Գործի քննության ողջամիտ տևողության հարցը քննարկելիս առաջնահերթ նշանակություն ունի արդարադատության պատշաճ իրականացման ապահովումը, որը կարող է իրացվել քննությունն իրականացնող մարմինների կողմից գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և ժամանակին ուսումնասիրությամբ: Ստրասբուրգյան չափանիշների համաձայն՝ դատարանները կրում են առանձնահատուկ պարտականություն՝ ապահովելու, որ գործի քննության ընթացքում որևէ դեր ունեցող բոլոր մասնակիցները կատարեն իրենցից

²⁷ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD\(2007\)044-e&fbclid=IwAR0fF-](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0fF-)

[Fgfx4u24Ar_eyJxZdaKzle6gmmUqjmLIVVdilcU70XtZMIHOyKK8CU](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0fF-Fgfx4u24Ar_eyJxZdaKzle6gmmUqjmLIVVdilcU70XtZMIHOyKK8CU), էջ 31, կետ 171:

կախված ամեն ինչ գործի քննության ցանկացած չարդարացված ձգձգումից խուսափելու նպատակով²⁸:

Պետությունն ինքն է կազմակերպում իր իրավական համակարգն այնպես, որ իր դատարանները կարողանան երաշխավորել, որ յուրաքանչյուր ոք ողջամիտ ժամկետում ձեռք բերի քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ վեճերի մասին վերջնական որոշում²⁹: Նշված պահանջը կատարելու համար Պետությունը կարող է նախատեսել տարբեր մեխանիզմներ՝ դատավորների թվաքանակի ավելացում, գործի քննության որոշակի ժամկետի առավելագույն շեմի սահմանում կամ այլ միջոցներ, որոնք Պետությունն է իրավասու ընտրել: Բայց եթե Պետությունը թույլ է տալիս, որ գործի քննությունը դուրս գա Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված ողջամիտ ժամկետի սահմաններից՝ առանց որևէ քայլ ձեռնարկելու վերը նշված մեխանիզմները զարգացնելու համար, ապա վերջնարդյունքի հետաձգման համար Պետությունն է պատասխանատու լինելու³⁰:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի հետագա խախտումները կանխելու համար Կոնվենցիան վավերացրած պետություններին

²⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. –Եր.: «Իրավունք», 2010, էջ 232:

²⁹ Տե՛ս Սկորդինոն ընդդեմ Իտալիայի (Scordino v. Italy) գործով 2006 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 36813/97, կետ 183:

³⁰ Տե՛ս Փրայսը և Լոուն ընդդեմ Միացյալ Թագավորության (Price and Lowe v. United Kingdom) գործով 2003 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 43185/98 և 43186/98, կետ 23: Կորմաչևան ընդդեմ Ռուսաստանի (Kormacheva v. Russia) գործով 2004 թվականի հունիսի 14-ի վճիռը, գանգատ թիվ 53084/99, կետ 54:

իրախուսում է կա՛մ գոյություն ունեցող իրավական պաշտպանության միջոցների շարքը փոփոխել, կա՛մ նոր միջոցներ ավելացնել, որպեսզի այդ իրավունքի խախտումների դիմաց արդարացի փոխհատուցումն իսկապես ապահովվի³¹:

Այնպիսի իրավական համակարգերում, որոնցում կիրառվում է այն սկզբունքը, ըստ որի՝ որոշակի ընթացակարգերի ապահովումը կախված է վարույթի կողմերից, վերջիններիս վերաբերմունքը և վարքագիծը չի ազատում դատարանին գործը ողջամիտ ժամկետում քննելու պարտականությունից, ինչպես պահանջում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը³²:

Դատարաններում գործի քննությունը ձգձգվելու հիմնական պատճառներից մեկը դատարանների ծանրաբեռնվածությունն է, մինչդեռ այս կապակցությամբ Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ *դատարանների քրոնիկ ծանրաբեռնվածությունը չի կարող արդարացնել վարույթի չափազանց երկար տևողությունը*³³:

Մյուս կողմից, օրենսդրական բարեփոխումների իրականացումը ևս չի կարող արդարացնել գործի քննության ձգձգումները, քանի որ պետությունները պարտավորվում են այնպես կազմակերպել նման ակտերի ուժի մեջ մտնելն ու կիրարկելը, որ խուսափեն քննության փուլում

³¹ Տե՛ս Լյուկենդան ընդդեմ Սլովենիայի (Lukenda v. Slovenia) գործով 2006 թվականի հունվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 23032/02, կետ 98:

³² Տե՛ս Սյուրմելին ընդդեմ Գերմանիայի (Sürmeli v. Germany) գործով 2006 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 75529/01, կետ 129:

³³ Տե՛ս Պրոբստմեյերն ընդդեմ Գերմանիայի (Probstmeier v. Germany) գործով 1997 թվականի հուլիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 20950/92, կետ 64:

գտնվող գործերի քննությունը երկարաձգելուց³⁴: Միայն պետությանը վերագրելի ձգձգումները կարող են արդարացնել «ողջամիտ ժամկետի» պահանջը չբավարարելու մասին եզրահանգումը³⁵:

Օրենսդիր մարմինն օրենսդրական մասնակի դրսևորումներում փորձել է կանխորոշել ողջամիտ ժամկետի սահմանները: Օրինակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլուխը կարգավորում է առանձին աշխատանքային վեճերով վարույթների առանձնահատկությունները՝ 210-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանելով, որ աշխատանքային վեճերն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ *երեք ամսվա ընթացքում*: Այսինքն, աշխատանքային վեճերի քննության և լուծման համար սահմանվել է հատուկ՝ ավելի սեղմ ժամկետ (երեք ամիս):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կարող է երկարաձգել դատարանի սահմանած և չավարտված, իսկ *օրենքով նախատեսված դեպքերում նաև օրենքով սահմանված և չավարտված դատավարական ժամկետները*: Հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքն աշխատանքային վեճերի քննության՝ օրենքով սահմանված եռամսյա ժամկետը երկարաձգելու հնարավորություն չնախատեսելով, չի ամրագրում նաև սահմանված ժամկետի խախտման դատավարական հետևանքներ:

³⁴ Տե՛ս Ֆիզանոտտին ընդդեմ Իտալիայի (Fisanotti v. Italy) գործով 1998 թվականի ապրիլի 23-ի վճիռը, գանգատ թիվ 32305/96, կետ 22:

³⁵ Տե՛ս Բուչհոլզն ընդդեմ Գերմանիայի (Buchholz v. Germany) գործով 1981 թվականի մայիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 7759/77, կետ 49:

Այսպիսով, առկա չեն ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքի խախտման փաստի ճանաչման պատշաճ ընթացակարգեր:

Ընդ որում, հարկ է նշել, որ ողջամիտ ժամկետում գործի քննության և լուծման վերաբերյալ հարցերի վերաբերյալ կարգավորումներ մինչ Օրենսգրքի ընդունումը նախատեսել է Օրենսգրքի նախագծի³⁶ 12-րդ հոդվածը, որի 5-րդ մասն ունեցել է հետևյալ բովանդակությունը. *«Ողջամիտ ժամկետում գործի դատական քննության կամ եզրափակիչ դատական ակտի կատարման իրավունքը խախտելու դեպքում շահագրգիռ անձն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրավունք ունի դիմել դատարան արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը ճանաչելու և պարճառված ոչ նյութական վնասը հատուցելու պահանջով»:*

Փաստորեն, Օրենսգրքի նախագծային փուլում ամրագրվել է ողջամիտ ժամկետում գործի դատական քննության խախտված իրավունքի վերականգնման օրենսդրական հնարավորությունը, մինչդեռ Օրենսգրքի նախագծում հետագայում կատարված փոփոխությունների արդյունքում ողջամիտ ժամկետում գործի քննության և լուծման վերաբերյալ կարգավորումները սահմանվել են 9-րդ հոդվածով, իսկ Օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պաշտպանության միջոցի օրենսդրական նշումն ուղղակի հանվել է:

Օրենսգրքի նախագծային փուլում ողջամիտ ժամկետում գործի դատական քննության խախտված իրավունքի վերականգնման կառուցակարգի ամրագրումն իսկ հավաստում է, որ առկա է եղել

³⁶ Հասանելի է http://www.parliament.am/draft_history.php?id=9402,
http://www.parliament.am/draft_docs6/K-209_LR.pdf:

օրենսդրական բաց, որի լրացման անհրաժեշտությունն է պայմանավորել այդպիսի կարգավորման նախատեսումը:

Օրենսգրքի սկզբնական նախագծի հիմնավորումներում՝ որպես ակնկալվող արդյունք, նշվել է, որ նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է Սահմանադրությամբ ամրագրված մոտեցումների լույսի ներքո երաշխավորել դատական իշխանության գործառույթային, կառուցակարգային, նյութական և սոցիալական անհրաժեշտ ու բավարար նախադրյալները³⁷: Արդյունքում, ստեղծվել է մի իրավիճակ, երբ անձի սահմանադրական իրավունքների խախտման դեպքում վերջինս չի կարողանում դիմել պաշտպանության որևէ միջոցի, քանի որ այդպիսիք սահմանված չեն օրենսդրությամբ:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ եթե նույնիսկ գործն ինքնին բարդ չէ, սակայն ներպետական օրենսդրությունն անորոշ և անկանխատեսելի է, ապա այն կարող է դժվարացնել գործի քննությունը, ինչն էլ իր հերթին կանդրադառնա գործի քննության ժամկետների երկարաձգմանը³⁸:

Գ) Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգը.

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 120:

³⁸ Տե՛ս Լուպենի հունական կաթոլիկ եկեղեցին և այլքն ընդդեմ Ռումինիայի (Lupeni Greek Catholic Parish and Others v. Romania) գործով 2016 թվականի նոյեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 7694311/82, կետ 150:

Անդրադառնալով ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու արդյունավետությանը՝ հարկ է նշել, որ Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը: Այսինքն, Օրենսդիրը բավարարվել է նման ընդհանուր ձևակերպմամբ, մինչդեռ «Ընդհանուր դատարանների մասին» Վրաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 75¹-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետն ուղղակիորեն սահմանում է, որ գործի քննության չարդարացված ձգձգումը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է³⁹:

Ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական պահանջը չպահպանելու համար դատավորին պատասխանատվության ենթարկելու պրակտիկա թեև առկա է⁴⁰, սակայն պետք է նշել, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելու արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի կայացրած որոշումն ինքնին արդյունավետ և բավարար միջոց չէ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման

³⁹ Հասանելի է <https://matsne.gov.ge/en/document/view/90676?publication=34>:

⁴⁰ Տե՛ս, մասնավորապես, ՀՀ արդարադատության խորհրդի 2011 թվականի թիվ ԱԽ-9-Ռ-12 որոշումը: Հասանելի է

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=68298&fbclid=IwAR1H6K5NyARXICX1I5mWXRzNmIHTzvWy180BPDw1IU-nSmwV4F7xmzbSKig>:

վերացման, առավել ևս՝ իրավունքի խախտումը կանխելու հարցում: Մինչդեռ, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը կարող է սուկ արձանագրել անձի իրավունքի խախտման փաստը՝ չունենալով գործի հանգուցալուծման ժամկետների վրա որևէ ազդեցություն:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ *գործը քննող դատավորի նկատմամբ կարգապահական գործողությունն արդյունավետ միջոց կարող է համարվել միայն, եթե դա ուղղակի և անմիջական հետևանք է առաջացնում այն վարույթների համար, որոնք վիճարկվում են*⁴¹:

Այսպիսով, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը ևս արդյունավետ միջոց չէ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումը վերացնելու կամ իրավունքի խախտումը կանխելու համար:

Դ) Կանխարգելիչ միջոցները.

Միջազգային իրավական համակարգերում մեծ տարածում ունեն ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման կանխարգելիչ միջոցները, որոնք, սակայն, ներպետական կարգավորումներում բացակայում են:

⁴¹ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD\(2007\)044-e&fbclid=IwAR0fF-](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0fF-)

[Fgfx4u24Ar_eyJxZdaKzle6gmmUqjmLIVVdilcU70XtZMIHOyKK8CU](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0fF-Fgfx4u24Ar_eyJxZdaKzle6gmmUqjmLIVVdilcU70XtZMIHOyKK8CU), էջ 28, կետ 147:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված միջոցն «արդյունավետ» է, եթե այն կարող է օգտագործվել դատարանների կողմից վերջնական որոշման կայացումն *արագացնելու* կամ արդեն իսկ տեղի ունեցած ձգձգումների համար հայցվորին պատշաճ փոխհատուցում տրամադրելու համար⁴²:

«Արդյունավետ» տերմինը ենթադրում է, որ միջոցը պետք է լինի բավարար և հասանելի⁴³: Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված «միջոցների» «արդյունավետությունը» կախված չէ անձի համար բարենպաստ արդյունքի որոշակիությունից⁴⁴:

Իրավական պաշտպանության որոշ միջոցներ կարող են կիրառելի լինել ինչպես ընթացիկ, այնպես էլ արդեն ավարտված վարույթի նկատմամբ, մինչդեռ որոշ միջոցներ կիրառելի են միայն ընթացիկ վարույթների նկատմամբ: Այն դեպքում, երբ վարույթն արդեն ավարտվել է, արագացնող միջոցներն արդյունավետության առումով դառնում են ոչ պիտանի և առարկայազուրկ: Ավարտված վարույթի պայմաններում կարող են կիրառվել փոխհատուցման կամ վարույթն իրականացնող մարմնի

⁴² Տե՛ս Պաուլինո Թոմասն ընդդեմ Պորտուգալիայի (Paulino Tomas v. Portugal (dec.)) գործով 2003 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 58698/00: Տե՛ս Միֆսուդն ընդդեմ Ֆրանսիայի (Mifsud v. France (dec.)) գործով 2002 թվականի սեպտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 57220/00, կետ 17:

⁴³ Տե՛ս Դորանն ընդդեմ Իռլանդիայի (Dorann v. Ireland) գործով 2003 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը, գանգատ թիվ 50389/99, կետ 56:

⁴⁴ Տե՛ս Կաիցը և այլք ընդդեմ Խորվաթիայի (Kaic and others v. Croatia) գործով 2008 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 22014/04, կետ 38: Կուդլան ընդդեմ Լեհաստանի (Kudła v. Poland) գործով 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 30210/96, կետ 157:

նկատմամբ կարգապահական գործողություններ ձեռնարկելու միջոցները⁴⁵:

Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ *որևէ ապացույց չկա, որ վնասի փոխհատուցման միջոցն ավելի արագ կքննվի, քան սովորական քաղաքացիական հայցը, որը կարող է մի քանի տարի տևել և անցնել դատական բոլոր աստիճաններով: Ժամանակի նման վատնումը չի կարող համարելի լինել վարույթն ավելի արագացնելու պահանջի հետ*⁴⁶:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածը թույլ է տալիս Պետություններին ընտրություն կատարելու ընթացող վարույթի ժամկետը երկարացնելու և արդեն տեղի ունեցած ձգձգման համար վնասի փոխհատուցման միջոցների միջև: *Նախընտրելի է առաջին միջոցը, քանի որ այն կանխում է ձգձգումները, իսկ փոխհատուցման միջոցն արդյունավետ կարող է համարվել, երբ վարույթն արդեն չափից դուրս երկար է տևել, և կանխարգելող միջոցը պարզապես չի գործի*⁴⁷:

Այն դեպքում, երբ դատական համակարգը թերի է կարգավորված Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված ողջամիտ ժամկետի պահանջն

⁴⁵ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD\(2007\)044-e&fbclid=IwAR0ff-Fgfx4u24Ar_izCxdaKzle6gmmUqjmLIVVdilcU70XtZMIHOyKK8CU](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0ff-Fgfx4u24Ar_izCxdaKzle6gmmUqjmLIVVdilcU70XtZMIHOyKK8CU), էջ 15, կետ 65:

⁴⁶ Տե՛ս Իլիչն ընդդեմ Սերբիայի (Ilić v. Serbia) գործով 2008 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 30132/04, կետ 65: ՄաքՖարլեյնն ընդդեմ Իռլանդիայի (McFarlane v. Ireland) գործով 2010 թվականի սեպտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 31333/06, կետ 123:

⁴⁷ Տե՛ս ՄաքՖարլեյնն ընդդեմ Իռլանդիայի (McFarlane v. Ireland) գործով 2010 թվականի սեպտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 31333/06, կետ 108: Գազսոն ընդդեմ Հունգարիայի (Gazsó v. Hungary) գործով 2015 թվականի հոկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 48322/12, կետ 39:

ապահովելու համար, ամենաարդյունավետ լուծումն այն միջոցն է, որը նախատեսված է դատական գործընթացներն արագացնելու համար, որպեսզի կանխվի դրա չափից դուրս երկար տևողությունը: Նման միջոցն ունի անհերքելի առավելություն այն միջոցի նկատմամբ, որն ապահովում է միայն փոխհատուցման տրամադրումը, քանի որ այն կանխում է նույն վարույթի հաջորդող խախտումների հայտնաբերումը և պարզապես չի վերականգնում արդեն կատարված խախտումը⁴⁸:

Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ *Կոնվենցիայով ամրագրված իրավունքներից մեկի խախտման դեպքում մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելը գերադասելի է դրամական փոխհատուցում տրամադրելուց*⁴⁹:

Եվրոպական դատարանի համար անհասկանալի կլիներ, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը նախատեսեր իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ՝ առանց ապահովելու կիրառված միջոցների կատարումը: Դա կարող է հանգեցնել իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների, որոնք Պայմանավորվող պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել⁵⁰:

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ լավագույն լուծումը, անվիճելիորեն, կանխարգելումն է: Նման միջոցն

⁴⁸ Տե՛ս Ֆինգերն ընդդեմ Բուլղարիայի (Finger v. Bulgaria) գործով 2011 թվականի օգոստոսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 37346/05, կետ 83(d):

⁴⁹ Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2002\)034-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2002)034-e), կետ 64:

⁵⁰ Տե՛ս Կայցը և այլք ընդդեմ Խորվաթիայի (Kaic and others v. Croatia) գործով 2008 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 22014/04, կետ 40:

անհերքելի առավելություն ունի իրավական պաշտպանության այնպիսի միջոցի նկատմամբ, ինչպիսին փոխհատուցումն է⁵¹:

2010 թվականի փետրվարի 24-ի նիստի ընթացքում Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ CM/Rec(2010)3 հանձնարարականը վարույթների չափազանց երկար տևողության արդյունավետ պաշտպանության վերաբերյալ: Հանձնարարականում ընդգծվել է, որ Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են դատավարության ընթացքում ապահովելու բոլորին Կոնվենցիայով վերապահված իրենց իրավունքներն ու ազատությունները, որոնք ներառում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը և 13-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Հանձնարարականում նշվել է նաև, որ դատավարությունների չափազանց երկար տևողությունը, որը հաճախ պայմանավորված է համակարգային խնդիրներով, առայժմ ամենատարածված խնդիրն է Եվրոպական դատարան ներկայացրած դիմումներում, և որ դրանով այն անմիջական սպառնալիք է ներկայացնում Եվրոպական դատարանի արդյունավետ գործունեության, հետևաբար նաև Կոնվենցիայի վրա հիմնված՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի համար⁵²:

Իրավունքի պաշտպանության վերը նշված միջոցների համադիր ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ

⁵¹ Տե՛ս Միլիչն ընդդեմ Մոնտենեգրոյի և Սերբիայի (*Milić v. Montenegro and Serbia*) գործով 2013 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 28359/05, կետ 73:

⁵² Տե՛ս Վլադը և այլք ընդդեմ Ռումինիայի (*Vlad and others v. Romania*) գործով 2013 թվականի նոյեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 40756/06, 41508/07 և 50806/07 կետ 88:

որպես առավել օպտիմալ և արդյունավետ միջոց կարող են ծառայել ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման կանխարգելիչ կառուցակարգերը:

Գլուխ 4

Քննարկման առարկա դրույթների դիտարկումը միջազգային փորձի տեսանկյունից

Տարբեր երկրներում առկա համապատասխան կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի երաշխավորման կամ խախտման դեպքում իրավունքների վերականգնման տարբեր կառուցակարգեր են գործում:

Այսպես, «Դատարանների մասին» Մոնտենեգրոյի օրենքի⁵³ 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի պատահականության սկզբունքով ընտրված դատավորի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի անաչառ քննության և լսելու իրավունք անկախ գործի բնույթից և կողմերից:

Նույն օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ կետով դատավարության կողմերին իրավունք է վերապահվում դատավարությունն արագացնելու պահանջով դիմելու դատարանի նախագահին: Նույն հոդվածի համաձայն՝ նման դիմումի հիման վրա դատարանի նախագահը կարող է դատավորից պահանջել գրավոր տեղեկություններ կամ զեկույց ներկայացնել գործի քննությունն օրենքով սահմանված կամ ողջամիտ ժամկետում չավարտելու պատճառների և հիմքերի վերաբերյալ:

«Ողջամիտ ժամկետի մասին» Մոնտենեգրոյի ակտը⁵⁴ երկարատև դատավարություններն արագացնելու, ինչպես նաև դրա համար

⁵³ Հասանելի է հետևյալ հղմամբ.

https://www.legislationline.org/download/id/6978/file/Montenegro_Law_on_courts_2015_en.pdf

⁵⁴ Հասանելի է հետևյալ հղմամբ.

փոխհատուցում պահանջելու հնարավորություն է տալիս հայցվորներին: Ակտի 33-րդ կետի համաձայն՝ արդար փոխհատուցման վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվի Մոնտենեգրոյի գերագույն դատարանին վերջնական դատական ակտի կայացման օրվանից հետո 6 ամսվա ընթացքում:

Վիճարկվող խնդրի լուծման նմանատիպ մեխանիզմներ են նախատեսված նաև Լեհաստանի օրենսդրությամբ: Մասնավորապես, «Դատական կարգով գործի քննությունն առանց չարդարացված ձգձգումների իրականացնելու կողմերի իրավունքի խախտման համար բողոք ներկայացնելու մասին» Լեհաստանի 2004 թվականի ակտի 2-րդ բաժնի համաձայն՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրենց իրավունքի խախտման վերաբերյալ բողոք դատավարության կողմերը կարող են ներկայացնել, եթե դատական քննությունը տևում է ավելի երկար, քան անհրաժեշտ է գործի կոնկրետ փաստական և իրավական հանգամանքները քննելու համար, կամ ավելի երկար է տևում, քան անհրաժեշտ է կատարողական գործողություններ ձեռնարկելու կամ դատարանի որոշման կատարումն ապահովելու համար անհրաժեշտ այլ գործընթացներն ապահովելու համար: 4-րդ բաժնի 1-ին կետի համաձայն՝ նման բողոքները քննվում են վիճարկվող վարույթը քննող դատարանի վերադաս ատյանում:

Նույն ակտի 12-րդ բաժնի 3-րդ կետի համաձայն՝ բողոքաբերի պահանջով դատարանը կարող է կարգադրել գործը քննող դատարանին գործն ըստ էության լուծող վերջնական որոշումը կայացնել ֆիքսված ժամկետում: Նման կարգադրությունը չպետք է անդրադառնա քննվող գործի փաստական կամ իրավական գնահատականին: Իսկ նույն բաժնի

<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-113978:>

4-րդ կետի համաձայն՝ բողոքաբերի պահանջով և եթե բողոքն արդարացված է, դատարանը կարող է տրամադրել արդար բավարարում (փոխհատուցում), որը չի կարող գերազանցել 10.000 լեհական դրամը⁵⁵:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման համար փոխհատուցում ստանալու հնարավորություն նախատեսում է նաև «Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կամ ողջամիտ ժամկետում դատական ակտի կատարման իրավունքի խախտման համար հատուցման մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքը⁵⁶, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ անձի դիմումի հիման վրա վերջինիս փոխհատուցում տրամադրվում է, եթե ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կամ ողջամիտ ժամկետում դատական ակտի կատարման իրավունքի խախտվել է անձից անկախ պատճառներով:

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքի⁵⁷ 6.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո, եթե երկար ժամանակ գործի դատաքննությունը չի սկսվում, և դատավարությունը ձգձգվում է, շահագրգիռ անձինք իրավունք ունեն դիմում-բողոք ներկայացնելու դատարանի նախագահին դատավարությունն արագացնելու վերաբերյալ: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատարանի նախագահի կողմից դիմում-բողոքի քննությունն իրականացվում է այն ստանալու պահից

⁵⁵ Հասանելի է հետևյալ հղմամբ.

<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-68476:>

⁵⁶ Հասանելի է հետևյալ հղմամբ.

<http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=209075&fld=134&dst=1000000001,0&rnd=0.03815859213406214#08380574082243637:>

⁵⁷ Հասանելի է հետևյալ հղմամբ.

[http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39570/8fd248bf68414ef74042e4f3ff0e46e249f78047/:](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39570/8fd248bf68414ef74042e4f3ff0e46e249f78047/)

հնգօրյա ժամկետում, ինչի արդյունքում կայացվում է պատճառաբանված որոշում, որում կարող են նշվել գործով դատական քննության իրականացման օրը և (կամ) այն գործողությունները, որոնք անհրաժեշտ է կատարել գործի դատական քննությունն արագացնելու համար:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման դիմաց փոխհատուցում վճարելու հարցը լուծելու իրավասությունը Խորվաթիայում վերապահված է Սահմանադրական դատարանին: Մասնավորապես, «Սահմանադրական դատարանի մասին» Խորվաթիայի ակտի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը բողոքի հիման վրա հարուցում է վարույթ անգամ, երբ դեռ չեն սպառվել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները, եթե դատարանը արդարադատությունը չի իրականացրել ողջամիտ ժամկետում (...): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերը նշված դեպքում Սահմանադրական դատարանը քննվող գործով վերջնական որոշում կայացնելու համար վերջնաժամկետ է սահմանում: Իր այդ որոշման մեջ Սահմանադրական դատարանը դիմումատուի համար սահմանում է համապատասխան փոխհատուցում վերջինիս սահմանադրական իրավունքների խախտման համար, որն արտահայտվել է իր իրավունքների և պարտականությունների մասին վերջնական որոշումը ողջամիտ ժամկետում չկայացնելու միջոցով⁵⁸:

Միջազգային փորձը վկայում է, որ ի տարբերություն ներպետական կարգավորումների՝ քննարկված երկրների օրենսդրական կարգավորումների արդյունքում սահմանվել են այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառության շնորհիվ հնարավոր է հասնել ողջամիտ ժամկետում

⁵⁸ Հասանելի է հետևյալ հղմամբ.

[https://www.legislationline.org/download/id/6952/file/Croatia constitutional court act 1999 am 2002 en.pdf](https://www.legislationline.org/download/id/6952/file/Croatia%20constitutional%20court%20act%201999%20am%202002%20en.pdf):

գործի քննության իրավունքի խախտման վերացման կամ այդ իրավունքի խախտման կանխարգելման:

